

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ը ՃԱՊՈՆԻԱ (Ք. ՍԱՊՊՈՐՈ)
ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, գրադեցրած պաշտոնը՝

Անի Մկրտչյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ճապոնիա (քաղաք Սապպորո), 2025 թվականի նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 13-ը

3. Հրավիրող կողմը՝

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (ՃՄՀԳ/JICA)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից կազմակերպվող «Վերականգնվող էներգիա - Ա» խորագրով դասընթացին

5. Քննարկված թեմաները՝

Գործուղման ընթացքում «Վերականգնվող էներգիա - Ա» խորագրով դասընթացի շրջանակում քննարկվել են Ճապոնիայում, մասնավորապես՝ հյուսիսային Հոկայդո նահանգում վերականգնվող էներգետիկայի ներդրման համակարգի միջոցառումները, երկրաջերմային էներգիայի օգտագործման առանձնահատկությունները, հողմային էներգիայի արտադրության նախաձեռնություններին առնչվող հարցերը, արևային էներգիայի կիրառությանն առնչվող հարցերը, Հոկայդո նահանգում վերականգնվող էներգետիկայի զարգացմանն առնչվող հարցերը և «Վերականգնվող էներգիա - Ա» խորագրով դասընթացին մասնակից երկրներում վերականգնվող էներգետիկայի

զարգացումը խթանող նախագծերի իրականացման և համապատասխան տեխնոլոգիաների ներդրման առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ և գործնական դասեր՝ նվիրված Հոկայդո նահանգում վերականգնվող էներգետիկայի մարտահրավերներին, նվաճումներին ու զարգացմանը, ինչպես նաև երկրաջերմային, հողմային և արևային էներգիայի արտադրությանն ու կիրառությանը: Կազմակերպվել են մի շարք տեխնիկական այցեր. Հոկայդո նահանգում հողմային էներգիայի արտադրության նախաձեռնություններին նվիրված այց, այց քաղաք Օբիհիրո (Obihiro), որի ընթացքում եղել են այցեր Հոկայդո նահանգի Կամիսիհորո գյուղի (Kamishihoro) էկոլոգիական օբյեկտ, որտեղ օրգանական թափոնները վերամշակվում են բիոգազի և էներգիայի, այց Հոկայդո նահանգի Սիկաոյ գյուղ (Shikaoi), որը բիոգազային էլեկտրակայանների օգտագործամբ (գյուղատնտեսությունից և անասնապահությունից ստացվող թափոնները վերամշակվում են բիոգազի, որն օգտագործվում է էլեկտրաէներգիա և ջերմություն արտադրելու համար) ձգտում է հասնել զրոյական CO₂ արտանետումների, այց Օբիհիրոյի (Obihiro) գյուղատնտեսության և անասնաբուժական բժշկության համալսարան, որտեղ ծանոթացում եղավ գյուղատնտեսության մեջ արևային էներգիայի գործնական կիրառմանը: Դասընթացի ընթացքում եղավ նաև այցելություն Սապպորո քաղաքի դպրոցներից մեկը, որի ընթացքում մանրամասն ծանոթացում եղավ Ճապոնիայի մշակույթին և ազգային ավանդույթներին, իսկ մասնակից երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից, նախօրոք սահմանված պահանջին համապատասխան, ներկայացվեց հայրենի երկրի բնաշխարհը արտացոլող 3 լուսանկարներից բաղկացած շնորհանդես:


7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հաշվի առնելով գործուղման բնույթը (դասընթաց)՝ պաշտոնական որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Սահմանված պահանջի համաձայն՝ դասընթացի ավարտին ներկայացրել եմ «Գործողությունների ծրագիր՝ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման վերաբերյալ» թեմայով շնորհանդես, որտեղ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի խնդիրներն ու մարտահրավերները ներկայացնելուն զուգահեռ ներկայացրել եմ նաև դասընթացի ընթացքում ինձ համար օգտակար եղած 3 ճապոնական լավագույն փորձի օրինակները և Հայաստանում դրանք տեղայնացնելու առանձնահատկությունները: Դասընթացի կազմակերպիչների կողմից առաջարկվել է հայրենիք վերադառնալուց հետո կիսվել դասընթացի ընթացքում ստացված տեսական և գործնական գիտելիքներով ու հնարավորության դեպքում ըստ արդյունավետության կիրառել երկրում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը



17.12.2025թ.